ընթացքում, իր կարծիքի հետ միասին պէտք է վերադարձնէր նախարարութեան: Օղակոմը նախագծի քննութիւնը յանձնեց միջազգային մի յանձնախմբի, որը ունեցաւ երկար խորհրդակցութիւններ, բայց կարելի չեղաւ յանգել ընդհանուր եզրակացութեան: Առանձին ազգերի ներկայացուցիչների դիրքը յանձնախմբում լիովին երևան բերեց քաղաքական այն ձգտումները, որոնցով տոգորուած էին այդ ազգերը: Հայերը, բացի հայ սոցիալ-դեմոկրատներից, որոնք ինքնուրոյն կարծիք չունէին, պաշտպանում էին կառավարական նախագիծը. վրացի սոցիալ-դեմոկրատները, յանձին Ժորդանիայի և Ռամիշվիլիի, համաձայն էին հայկական ծրագրին. միւս կուսակցութիւնները շարունակում էին պնդել Ախալքալաքն ու Լոռին Վրաստանին միացնելու պահանջի վրա: Թուրքերը հիմքից մերժում էին նախարարական նախագիծը. նրանք առաջարկում էին Անդրկովկասը բաժանել աւելի մանր վարչական—դեմոտուրական միութիւնների՝ այդ միջոցով կամենալով ապահովել մահմեական տարրերի գերակշռութիւնը Կովկասում: Այս տարակարծութիւններն ու վէճերը մինչև վերջ էլ մնացին չլուծուած և, ի վերջոյ, ճակատագրական դեր կատարեցին կովկասեան ժողովուրդների կեանքում:

Պէտք է նկատել, որ թէ վարչական սահմանագծման և թէ այլ հարցերում, հէնց սկզբից, նկատելի դարձաւ թուրք-վրացական ընդհանուր հասկացողութիւն ու գործակցութիւն: Բոլոր կարևոր խնդիրներում, երբ հրապարակ էր գալիս կովկասեան ժողովուրդներին վերաբերող ընդհանուր մի խնդիր, թուրք ու վրացի ներկայացուցիչները դուրս էին գալիս համերաշխ ու միացեալ ճակատով: Ցեղափոխութեան առաջին օրերից սկսած մինչև վերջ թուրք-վրացական ընդհանուր ճակատը հայերի հետ առընչութիւն ունեցող բոլոր դէպքերում մնաց փաստ, և այս հանգամանքը դարձաւ անդրկովկասեան կեանքի կարևոր գործօններից մէկը: Այդ դաղտնի թէ բացայայտ գործակցութիւնը ունեցաւ չափազանց աղէտաւոր հետևանքներ կովկասեան ժողովուրդների համերաշխ մէկ ընտանիք կազմելու տեսակէտից: Վրաց-թրքական գործակցութիւնը, մասնաւորապէս այլանդակ ձևերով արտայայտուեց անդրկովկասեան դիւղացիական համագումարում, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները և թուրք բէգերն ու աղալարները, ձեռք-ձեռքի տուած, պայքար մղեցին սոցիալիստ-յեղափոխականների և Հ.Ց.Դաշնակցութեան հողային բանաձևի դէմ և կամենում էին հայ դիւղացիութեան պարտադրել սոցիալ-դեմոկրատական հողային ծրագիրը: